



# Ազդարարության Trumpet's Sound **փող**

49-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ  
ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2018





# Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: [pastor@armenianbrethren.org](mailto:pastor@armenianbrethren.org)  
URL: [www.acmaust.org](http://www.acmaust.org)

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արդյոք ուրա՞խ եք ..... Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Աբրահամի հավատքի կյանքի սկիզբը ..... Դոն Սթորմըր

Գառնուկը մեռավ, մարդն ազատվեց ..... Աբրահամ Սարգիսյան

Մանուկներին ավետարանելու ուրախությունը..... Մանկանց ավետ. ընկ.

Գեթսեմանում..... Ռեքս Տիրլավ

Հովհաննեսի նամակները (4)..... QMBC պանորամա

Պահել Օրենքը ..... Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Եղիա մարգարեն ..... Հասիպ Ալանանի

Ինչո՞ւ տեսիլք..... Դոկտ. Չեպով Բասսարա

Կորեացի Պողոսը..... Քաղված

Կեղծ եղբայրներ..... Հովիվ՝ Րաֆֆի Չափարյան

## Արդյոք ուրախ եք

Աստվածաշնչում կարդում ենք. «Սիշտ ուրախ եղեք Տիրոջով, նորից եմ ասում՝ ուրախ եղեք» (Փիլիպ. 4:4): Գուք կարող եք առարկել՝ ասելով. «Իսկ գիտե՞ք, թե ինչերի միջով եմ անցնում. ինչպե՞ս կարող եմ ուրախ լինել»:

- Կինս մահվան անկողնում է:
- Մենք չգիտենք, թե որտեղ է մեր որդին:
- Գործազուրկ եմ երկար ժամանակ:
- Պարտատերերս, դռան մոտ կանգնած, իրենց գումարն են պահանջում:
- Կյանքիս մեջ քաոս և անհանգստություն կա:

Սիրելի՛ բարեկամ, իսկ դուք գիտե՞ք, որ Տեր Հիսուսն այդ իսկ պատճառով եկավ մեղավոր աշխարհ: Այո՛, չարն ուզում է մեր խաղաղությունն ու ուրախությունը վերցնել մեզանից:

Տեր Հիսուսը, նախքան Իր համբառնալը, Իր աշակերտներին ասաց. «Խաղաղություն եմ թողնում ձեզ»։ Առանց սրտի խաղաղության՝ չկա ուրախություն:

Հովհ. 17:16-ում կարդում ենք. «Նրանք աշխարհից չեն, ինչպես Ես աշխարհից չեմ»։ Այո՛, դուք աշխարհում եք, բայց աշխարհից չեք:

Կող. 3:1-2-ում կարդում ենք. «Եթե Քրիստոսի հետ հարություն եք առել, ուրեմն, վերին բաները փնտրեցեք, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում: Վերին բաների մասին մտածեցեք և ո՛չ թե այն, որ երկրի վրա է»:

Հաճախ մեզ շրջապատող իրավիճակներին նայելով՝ հուսահատվում ենք: Մատանան շատ առումներով վարպետ է մեզ խաբելու մեջ, և ի վերջո, ինչպե՞ս կարող եմ ուրախ լինել, եթե մեղքն իմ մեջ է բնակվում:

Տխրության, բարկության և դատարկության ամենազլխավոր պատճառներից մեկը մեղավոր բնություն ունենալն է, որը ուրախությունը վերցնելով, մեր մեջ ատելություն և ընկճախտ է առաջացնում:

Ի՛մ սիրելի բարեկամ, Տեր Հիսուսին փորձե՞լ ես: Երբևէ քո սենյակ մտե՞լ ես ու սրտիդ դուռը բացե՞լ ես Նրա առաջ, թույլ տվե՞լ ես, որ ներս մտնի: Թո՛ւյլ տուր Նրան գալ քո կյանք ու տեսնել քեզ՝ ինչպիսին կաս:

Մի՛ ծածկիր Նրանից քո մեղքերը, քանի որ Նա մեռավ, որ կյանք ունենաս: Նա ողորմող և սիրող Հայր է, ընկեր է բոլոր կոտորված սիրտ ունեցողներին: Տեր Հիսուսը կարող է նորոգել քեզ և նորը դարձնել Իր մեջ: Այո՛, Նա կարող է վերցնել քո ամբողջ ատելությունը և տխրությունը, սիրտդ լցնել ուրախությամբ և ցնծությամբ: Նա ամեն առավոտ քեզ նոր երգ կտա, և դու դարձյալ ուրախ կլինես:

Սա մի գաղտնիք է. աշխարհում միլիոնավոր մարդիկ ամեն օր ուրախանում են Տիրոջով ոչ թե իրենց ունեցածի համար, այլ իրենց կյանքում Նրա կատարած գործերի համար:

Օրինյալ օր եմ մաղթում ձեզ:

Հ. Գ.



## **Աբրահամի հավատքի կյանքի սկիզբը Կարդացե՛ք Ծննդոց 11:30 - 12:10**

**Կ**ան շատ լավ պատճառներ, թե ինչու է Ծննդոց գրքի մեծ մասը հատկացված Աստծո բարեկամ Աբրահամի կյանքին: Երբայեցիներին 11-րդ գլխում Աբրահամին ավելի մեծ հատված է հատկացված, քան այնտեղ նշված հերոսներից որևէ մեկին: Ի՞նչ կարող ենք սովորել նրա կյանքից: Նրա պատմությանը կսկսենք ծանոթանալ Ծննդոց 11-րդ գլխում:

«Եվ Թարան առավ իր որդի Աբրամին և Առանի որդի Դովտին՝

իր որդու որդուն, և իր հարսին՝ Սարային՝ իր որդի Աբրամի կնոջը, և նրանք դուրս եկան քաղղեացիների Ուր քաղաքից՝ Քանանի երկիրը գնալու համար. և եկան մինչև Խառան և այնտեղ բնակվեցին» (Ծննդ. 11:31):

Այս համարը կարդալով՝ մեզ մոտ այն տպավորությունն է ստեղծվում, թե Թարան էր պարագաները վերահսկողը: Համարում ասվում է, որ նա իր որդուն, հարսին և թոռնիկին վերցրեց քաղղեացիների Ուր քաղաքից դեպի Քանանի երկիր գնալու համար: Խառանում նրանք բնակություն հաստատեցին: Բայց արդյոք այսպե՞ս պետք է լիներ:

Հաջորդ գլխում տեսնում ենք, որ Տերն Աբրամին ասում է. «Դ՛ուրս եկ քո երկրից ու ազգականներից և քո հոր տնից այն երկիրը, որ Ես քեզ ցույց կտամ» (Ծննդ. 12:1): Մրա մասին խոսում էր Ստեփանոսը, երբ կանգնած էր Սեմեդրիոնի առջև, նախքան քարկոծվելով սպանվելը. «Փառաց Աստվածը Աբրահամին երևաց, երբ նա բնակվում էր քաղղեացիների Ուր քաղաքում...»:

Բայց Աբրամը լիովին չհնազանդվեց Տիրոջը մինչև իր հոր մահանալը: Նա թողեց իր երկիրը, բայց դեռևս կապեր ուներ հայրական տան հետ: Գաղափար չունենք, թե որքան ժամանակ մնաց Խառանում, բայց կարող ենք նաև ենթադրել, որ Թարան մահվան շեմին չէր, երբ քաղղեացիների Ուր քաղաքից ընտանիքով դուրս եկան: Հարցերից մեկը, որ ինքներս անընդհատ պետք է տանք, այն է, թե արդյոք լիովին հնազա՞նդ ենք այն պատվիրաններին, որոնք Աստված արդեն հայտնել է մեզ Իր Խոսքում: Մենք չպետք է մտածենք, որ պատվիրանը մասամբ պահելով՝ Աստծո կամքը կատարած կլինենք:

Մրա կարևորությունը տեսնում ենք այն բանում, թե ինչպես Աստված Իր Անձը հայտնեց Աբրամին: Աստված խոսեց Աբրամի հետ՝ քաղղեացիների Ուր քաղաքում պատվիրելով, որ գնա այն վայրը, ուր Ինքը ցույց կտա նրան: Երբ Աբրամը հասավ այնտեղ, միայն այդ ժամանակ Տերը հաստատեց նրա քայլը՝ ցույց տալով, որ նա այնտեղ էր, որտեղ պետք է լիներ:

Նաև Աստված Աբրամին անպայմանական խոստում տվեց. «Եվ Ես քեզ մեծ ազգ եմ դարձնելու, և քեզ օրհնելու եմ և քո անունը բարձրացնելու, և դու օրհնություն ես լինելու: Պիտի օրհնեմ քեզ օրհնողներ-

րին և պիտի անիծեմ քեզ անիծողներին, և երկրի բոլոր տոհմերը քեզ-նով պիտի օրհնվեն» (Ծննդ. 12:2-3): Ավելի ուշ Աբրամը խոր ըմբռնեց այս ճշմարտությունը և լիովին հավատաց Աստծո կողմից իրեն տրված խոստմանը: Նա հնազանդվեց Աստծուն, երբ իրեն ասվեց զոհաբերել իր միակ որդուն, որին սիրում էր: Նա կատարելապես համոզված էր, որ Աստված կատարելու էր այն, ինչ խոստացել էր: Նրա սերունդը և օրհնությունը Իսահակի միջոցով պիտի գար, և եթե նույնիսկ Իսահակին զոհաբերելու լիներ, Աստված նրան անմիջապես կհարուցաներ: Եթե Աստված խոստացել է, ապա անպայման կատարելու է դա:

Աբրամ գնաց՝ ինչպես Տերն իրեն ասել էր: Դովտն էլ նրա հետ գնաց: Նա յոթանասունհինգ տարեկան էր, երբ Խառանից ելավ: Աբրամ՝ իր կնոջը՝ Սարային ու իր եղբորորդուն՝ Դովտին, և իրենց ամբողջ ստացվածքը և Խառանում իրենց ստացած ծառաներին վերցնելով՝ վեր կացավ, որ Քանանի երկիր գնա: Նրանք մտան քանանացիների երկիր և անցան Սյուքեմի երկիր, մինչև Մորեի կաղնին: Միայն այդ ժամանակ Տերը կրկին հայտնվեց Աբրամին և ասաց, թե այդ երկիրը նրա սերունդներին է տալու: Մինչև այդ պահը Աբրամը չգիտեր, թե երբ է հասնելու իր վերջնակետին: Եթե որևէ մեկը նրան հարցներ, թե ուր է գնում, նա չէր կարողանա հստակորեն նշել այն վայրի անունը, որտեղ գնում էր:

Այս դրվագից երկու դաս ենք սովորում՝ վրանը և զոհասեղանը: Աբրամը զոհասեղան կառուցեց և վրան բացեց: Մի զոհասեղան նախ Սյուքեմում կառուցեց, ապա՝ Բեթելի և Գայի միջև: Սա առանձնահատկություն էր, որը բնորոշ էր նրա կյանքի մնացած ընթացքին, ենթադրաբար բացի այն ժամանակից, երբ Եգիպտոսում էր գտնվում: Չոհասեղանը երկու բան է ընդգծում. նախ որ Աբրամը երկրպագում էր Տեր Աստծուն, և երկրորդ՝ իրեն շրջապատող մարդկանց համար վկա էր այն մասին, որ ինքը միակ ճշմարիտ Աստծո ծառան է: Չոհասեղան կառուցելը նշանակում էր, որ իր հավատքը գաղտնի չէր: Մարդիկ, հավանաբար, հարցրին Աբրամին իր հավատքի մասին, և նրա պատասխանը հստակ ու պարզ էր: Նա երկրպագում էր միակ ճշմարիտ Աստծուն:

Աբրահամի կյանքին բնորոշ երկրորդ բնութագիրը վրանն էր: Այն նշանակում է, որ անձը չունի մշտական բնակավայր, նա պարզապես ճամփորդ է կամ ժամանակավոր բնակիչ: Եբրայեցիներին թոթի հեղինակը սրա մասին գրում է. «Հավատով պանդուխտ դարձավ ավետյաց երկրում, ինչպես օտարության մեջ, վրաններում բնակվելով Իսահակի ու Հակոբի հետ, որոնք նույն խոստման ժառանգորդներ էին, որովհետև նա սպասում էր այն քաղաքին, որ հիմքեր ունի, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է»:

Սա հիշեցնում է մեզ Պետրոսի ուսմունքը, որով աղաչում է մեզ պանդուխտների և օտարականների պես թողնել մարմնավոր ցանկությունները, որոնք պատերազմում են հոգու դեմ (Ա Պետր. 2:11): Մենք աշխարհին չենք պատկանում, որպես օտարականներ՝ աշխարհը մեր տունը չէ, որպես պանդուխտներ՝ մենք ուղևորվում ենք մեր հանգրստի բնակավայր: Հետևաբար, նահապետների նման մենք պետք է խոստովանենք, որ երկրի վրա օտարականներ և պանդուխտներ ենք: Եվ եթե այդպես է, ապա Աստված ամոթ չի համարում մեր Աստվածը կոչվել, որովհետև Ինքը մեզ համար քաղաք պատրաստեց:

Ի՞նչ ենք սովորում այս ամենից: Արդյոք պատրաստ ենք լիովին հնազանդվել Աստծուն: Արդյոք պատրաստ ենք մեզ շրջապատող մարդկանց ցույց տալ, որ Տեր Հիսուսի հետևորդ ենք: Արդյոք մեր կյանքով ակնհայտ ցույց կտա՞նք, թե կառչած չենք աշխարհային բաներից և պանդուխտներ ու օտարականներ ենք:

Դոն Սթրանդը

*«Եթե Աստված է ամբողջ տիեզերքի Արարիչը, ապա Նա է նաև ամբողջ տիեզերքի Տերը: Աշխարհի որեւէ անկյուն դուրս չէ Նրա տիրապետությունից: Հետեւաբար, իմ կյանքի որեւէ մասը չպետք է Նրա տիրապետությունից դուրս մնա» (Ր. Ս. Սփրուլ):*

*«Քրիստոնյաների մեծամասնությունը ողջունում է Աստծո գերիշխանությունը, բայց հավատում է մարդու գերիշխանությանը» (Ր. Ս. Սփրուլ):*

## Գառնուկը մեռավ, մարդն ազատվեց

«Եվ Տերը խոսեց Մովսեսի ու Ահարոնի հետ Եգիպտոսի երկրում՝ ասելով. «Այս ամիսը ձեզ համար ամիսների սկիզբը թող լինի, ձեզ համար տարվա ամիսներից առաջինը լինի սա: Իսրայելի ամբողջ ժողովրդի հետ խոսեցե՛ք՝ ասելով. «Այս ամսի տասին յուրաքանչյուրն իր համար թող մի գառ առնի՝ ըստ իրենց հայրական տների՝ ամեն մի տան համար մի գառնուկ: Եվ եթե մեկ տունը մեկ գառան համար քիչ լինի, թող նա իր դրացու հետ՝ անձերի թվի համաձայն վերցնի. ամեն մեկն իր կերածի չափով հաշվեցե՛ք գառան վրա: Չեր գառն անարատ, մեկ տարեկան որձ պետք է լինի. ոչխարներից կամ այծերից վերցրեք: Եվ պահե՛ք ձեզ համար մինչև ամսի տասնչորրորդ օրը, և Իսրայելի ամբողջ բազմությունը թող մորթի այն երեկոյան: Եվ արյունից վերցնեն և տան դռան երկու կողմերի դրանդիների և դռան շրջանակի վերևում քսեն, որտեղ այն ուտելու են...» (Ելից 12:1-7):

Մի պատշար աշխատանքի ժամանակ ընկավ բարձրահարկ շենքից, սակայն անկումը մահացու չէր: Նա ընկավ ներքևում գտնվող մի գառնուկի վրա. գառնուկը տեղում մեռավ, սակայն մարդն ազատվեց ստույգ մահից: Նա անմիջապես գնաց սրճարան՝ խմելու, և սկսեց պարծենալ՝ ասելով. «Երբ ընկնում էի, այնպիսի շարժումներ արեցի, որ որևէ վնաս չկրեցի»: Քիչ հետո արբենալով՝ մի նստարանի վրա պառկեց ու քնեց: Քնած ժամանակ նստարանից ընկավ ու մահացավ: Մա էր ապերախտի վախճանը:

Տեր Հիսուսը՝ Աստծո գառը, մահացավ և մարդն ազատվեց: Սակայն ավա՛ղ. Շատերը, հպարտ ու ապերախտ լինելով, շարունակում են իրենց սխալ ու վտանգավոր ճամփան, մինչև որ հավիտենապես կորչեն: «Իմանալով, որ դուք ո՛չ թե ապականացու բաներով եք փրկվել, ինչպես՝ արծաթն է կամ ոսկին, ձեր հայրերի ավանդույթներով ժառանգված ունայն ճամփաներից, այլ Քրիստոսի՝ որպես անքիժ ու անարատ մի գառան պատվական արյունով» (Ա Պետ. 1:18, 19):

Վեր.՝ Աբրահամ Սարգիսյան  
Քաղված՝ «Օրեօր» գրքից

## **Մանուկներին ավետարանելու ուրախությունը**

- Մենք ուրախություն ենք ստանում, երբ ավետարանում ենք երեխաներին:

«Նրանք, որ արցունքով են ցանում, ցնծությամբ են հնձելու: Նա, ով լալով է գնում՝ թանկագին սերմը տանելով, անկասկած վերադառնալու է՝ իր խրճերը բերելով» (Մադ. 126:5-6):

Նույնիսկ եթե արցունքով ցանենք Աստծո խոսքը միևնույն է ունենալու ենք ուրախություն:

Այս ուրախությունը լինելու է.

- Տիրոջը հնազանդության ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ,
- երեխաներին փրկված և հոգևորապես աճող տեսնելու ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ,
- մի օր Տիրոջից հետևյալը լսելու ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ. «Լա՛վ, բարի և հավատարիմ ծառա... մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. 25:23):

- Որքա՛ն հրաշալի է տեսնել, թե Աստված ինչպես է գործում երեխաների սրտում: Մեծ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ է լսել, թե ինչպես են նրանք խոսում Աստծո հետ: Որքա՛ն բան կարող ենք սովորել նրանցից:

«Միրելի՛ Տեր, ես վատն եմ, արի՛ իմ սիրտ և ինձ դարձրո՛ւ լավը»:

Մա մի երեխայի աղոթք է: Մեր մաղթանքն է, որ հնարավորություն ունենաք ապրելու այսպիսի ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ՝ լսելով այսպիսի աղոթք, որ երեխաներն են աղոթում:

- Մեկ այլ մեծ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ է մանուկների ավետարանչության ծառայության մեջ, երբ տարիներ անց բացահայտում ես ծառայությանդ հավիտենական արդյունքները՝ հանդիպելով արդեն չափահաս դարձածների, ում ավետարանել ենք մանուկ

հասակում, և նրանք շարունակում են մնալ Տիրոջը հավատարիմ և քայլում են Տիրոջ ճանապարհներով:

- ՌԻՐԱԽՈՒԹՅՈՒՆ Է նաև, երբ ծառայությունից հետո լսում ենք, թե այն երեխաները, ում ավետարանել ենք, ինչ ազդեցություն են ունեցել իրենց ծնողների և ընտանիքի անդամների վրա: Շատ հաճախ Ավետարանը չափահասների սրտին է հասնում երեխաների միջոցով:
- Կասկած չկա, որ մանուկների ավետարանչության մեջ ավետարանիչի մեծագույն ՌԻՐԱԽՈՒԹՅՈՒՆՆ այն է, երբ երեխային առաջնորդում է Քրիստոսի մոտ՝ իմանալով, որ մի անուն ևս գրվեց Գառնուկի Կյանքի գրքում:

Ունեցե՞լ ես այս ուրախության փորձառությունը: Երեխաները սպասում են, և նրանց սիրտը բաց է: Աստված կօգտագործի քեզ նրանց կյանքում, եթե հնազանդվես Նրա կանչին՝ երեխաներին փրկության Ավետարանը հասցնելու և մեծ ուրախություն վայելելու համար:

Շնորհակալ եղիր, որ Աստված քեզ կանչել է երեխաների ծառայության, և ձգտի՛ր այն ՌԻՐԱԽՈՒԹՅԱՆԸ, որը Նա տալու է քեզ, երբ հնազանդվես Նրան և երեխաներին հասցնես Ավետարանը:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

## **Գեթսեմանում**

**Ա**յս Ջատիկին եկե՛ք ինձ հետ Գեթսեմանի պարտեզի հնագույն ծառերի մոտ: Ջատիկի լուսինը երևում է երկնակամարի վրա: Գարնանային գիշերվա անդորրը հանկարծ խախտվում է ցածր խոսակցության և քայլվածքի ձայներով: Ահա հեռվից նշմարվում է Մեկը, ում միացել է մի քանի տղամարդ: Հաղթական, նվաճող և ուրախ Հիսուսի դեմքի արտահայտությունը փոխված է այն սարսափելի բանից, որը շուտով տեղի է ունենալու. «Հոգիս չափազանց տրտում է, նույնիսկ՝ մահու չափ» (Մատթ. 26:38): Երեսնիվար գետնին ընկնելով՝

Նա հուսահատորեն դիմում է Իր Հորը: «Եվ մի քիչ առաջ գնալով, գետնի վրա ընկավ ու աղոթք արեց, որ եթե կարելի է, այն ժամն Իրենից անցնի» (Մարկ. 14:35):

Անշուշտ, Աստված, ով գործություն ունի՝ ամեն ինչ անելու, կարող էր ինչ-որ կերպով հեռացնել գալիք դժվարությունը: Սակայն Հիսուսն Աստծուց «ոչ» պատասխանը ստացավ: Ի զարմանս մեզ, Տեր Հիսուսն օգնության համար Իր ընկերներին դիմեց, բայց նրանք քնել էին: «Քնո՞ւմ ես, չկարողացա՞ր մեկ ժամ արթուն մնալ» (Մարկոս 14:37): Այդ կարճ դրվագում մենք տեսնում ենք խիստ մենակություն: Այլ ուղի չկար: Սիրո հնազանդությամբ Հիսուսը մեկ քայլ ևս կատարեց դեպի խաչը, դեպի Աստծո հավիտենական և հրաշալի փրկության ծրագրի իրականացում:

Անհնար է մարդկային բառերով նկարագրել Հիսուսի տանջանքը Գեթսեմանի պարտեզում: Ահա մի իրավիճակ, երբ անձն իր ընկերներին է դիմում՝ ասելով. «Ես ցավ ունեմ, միայնակ եմ զգում, խորը տագնապի մեջ եմ, արդյոք կկանգնե՞ս կողքս»: Հետաքրքրական է, թե մեր դարի քրիստոնյաներից քանի՞սը կկարողանան այդպես անել: Կարիքն ընդունելը թուլության նշան չէ, այլ ամբողջականության: Սա կտրականապես տարբեր է «ուժեղ» մարդու վերաբերմունքից, ով երբեք չի ընդունում, որ կարիքի մեջ է: Իրականում շատերն այնքան են վախենում իրենց կարիքների իրականությունից, որ անընդհատ փախչում են դրանից:

Ուժեղ մարդու քրիստոնեական տարբերակը հետևյալն է. «Ես իմ կյանքում ունեմ հաղթանակած, հարություն առած Քրիստոսին և ամեն բան կարող եմ Քրիստոսով, ով գորացնում է ինձ: Հետևաբար, ես չեմ կարող չընդունել, որ աջակցության կարիք չունեմ: Դա կնշանակեր, որ ես աշխարհին ասում եմ, թե Քրիստոսը բավարար չէ, կամ էլ՝ ես այդքան էլ հոգևոր չեմ: Այս երկուսից ոչ մեկը չեմ կարող անել, այնպես որ պարզապես շարունակելու եմ ինձ և իմ շրջապատի մարդկանց ասել, որ ամեն ինչ լավ է, նույնիսկ եթե այդպես չլինի»:

Օգնության կարիքը չընդունելու համատարած առարկություններից մեկն այն է, որ սխալ է մեր խնդիրներով ուրիշներին անհանգստացնելը: Սա ճիշտ է: Ուշադրություն դարձրեք, թե Տեր Հիսուսն ինչպես

վարվեց: Նա ծանոթների լայն շրջանակ ուներ, տասներկու աշակերտներից բաղկացած խումբ, և նրանց միջից երեքհոգանոց ավելի նեղ շրջանակի մի խումբ, նաև բազմաթիվ այլ մարդիկ: Հիսուսն Իր աշակերտներին ուղղակի խնդրեց, որ աղոթեն, բայց ավելի շատ բան բացահայտեց Իր նեղ շրջանակի աշակերտներին՝ Պետրոսին, Հովհաննեսին և Հակոբոսին: Նրանց պատմեց Իր զգացումների մասին: Այնուամենայնիվ, միայն Հորն ուղղված աղոթքում Հիսուսն ամբողջությամբ արտահայտեց Իր սրտում եղածը:

Մտերիմ ընկերների պարագայում դժվարության մասին կիսվելն ամենևին նրանց անհանգստացնել չի նշանակում: Հետաքրքրական է, թե մեզանից քանի՞սն ընկերներ ունեն, որոնք պատրաստ են լսելու մեր կարիքները և ընդունելու, որ իրենք նույնպես աջակցության կարիք ունեն: Մենք կարող ենք ինքներս մեզ «քրիստոնյա ուժեղ մարդու» հագուստը հագցնել և ասել. «Մենք քո ծառայության ու աջակցության կարիքը չունենք»: Սա կնպաստի մեր եկեղեցիներում այնպիսի երևույթի տարածմանը, որը կոչվում է մեմակոթյուն: Բայց ի՞նչն է մետաղադրամի մյուս կողմը՝ մեր դերը՝ որպես մտերիմ ընկեր: Արդյո՞ք մենք այդպիսի անձիք ենք, որոնց մարդիկ համարձակությամբ ու վստահությամբ կարող են մոտենալ: Եթե մենք դատողական դիրքորոշում ունեցող մարդիկ լինենք կամ մեր խնդիրների մեջ այնքան խորասուզված, որ մարդիկ, տեսնելով մեզ, կխուսափեն իրենց խնդիրները բաժնեկցելուց: Որքա՞ն հեշտ է աշակերտների նման լինել՝ այնքան քնկոտ ու միայն մեր մասին մտածող, որ պարզապես չհասկանանք, թե իրականում ինչ է կատարվում մեր դիմացինի կյանքում: Աշակերտներն օգնություն չցուցաբերեցին Տիրոջը, երբ Նա դիմեց նրանց աջակցությանը: Նրանց թուլամորթությունն ավելի ծանրացրեց Հիսուսի բեռը: Այս տխուր ու հոգնած մարդիկ չկարողացան օգնել իրենց լավագույն ընկերոջը բեռը թեթևացնելու: Այնուամենայնիվ, ինչպիսի՞ մեծ պատիվ կլիներ, եթե նրանք Տեր Հիսուսին օգնած լինեին նախքան խաչի չարչարանքները սկսվելը:

Երբեմն Աստված ուրիշի բեռը թեթևացնելու այդ պատիվն առաջարկում է ինձ ու քեզ: Եկե՛ք արթուն ու պատրաստ գտնվենք, երբ այդպիսի առիթ ընծայվի մեզ Տիրոջ կողմից:

Ռեքս Տիրլավ

## Հովհաննեսի նամակները (4)

**Ի**ր նամակի ավարտին Հովհաննեսն ամփոփում է այն գլխավոր ճշմարտությունները, որոնք ներկայացրել է: Տասնութ անգամ Հովհաննեսն ասում է. «Մենք գիտենք...»: Նամակի այս մասում նա ասում է. «Գիտենք, որ բոլոր նրանք, որ Աստծուց են ծնված, մեղք չեն գործում...»: «Գիտենք, որ մենք Աստծուց ենք...», և «գիտենք, որ Աստծո Որդին եկավ...» (Ա Հովհ. 5:18, 19, 20): Գնոստիկները պահանջում էին «գերազանց» կամ «հատուկ» գիտելիքներ ունենալ, սակայն նրանց գիտելիքները կեղծ էին, և նրանց աստվածը կեղծ էր: Այն իրականում կուռք էր (Ա Հովհ. 5:21), քանի որ զբաղեցրել էր ճշմարիտ Աստծո տեղը: Հովհաննեսը ներկայացնում է այն, ինչ ճշմարիտ է. Նա գրում է. «...Մեզ հասկացողություն պարզեց, որ ճանաչենք Նրան, որ ճշմարիտ է, և մենք Նրա՝ ճշմարիտի մեջ ենք՝ Իր Որդու Հիսուս Քրիստոսի մեջ: Նա՛ է ճշմարիտ Աստվածը և հավիտենական կյանքը» (Ա Հովհ. 5:20):

Նրանք, ովքեր շարունակում են մեղք գործել, որոնց սովորությունը մեղք գործել է, չեն կարող ճշմարիտ քրիստոնյա լինել: Քրիստոնյաներն արդարությամբ են ապրում, և Տերը նրանց պահում է չարից (Ա Հովհ. 5:18): Հատկանշական է, որ Հովհաննեսն այս նամակում չարի մասին ինն անգամ է հղում կատարում: Չարը սատանան է՝ Աստծո թշնամին: Բայց Քրիստոսն արդեն հաղթել է սատանային, և Քրիստոսի մեջ եղողներն այլևս չարի իշխանության տակ չեն (Ա Հովհ. 5:19, Հովհ. 17:11, 14-16):

Վերջին հորդորը սա էր. «Որդյակներ՛ր, դուք ձեզ հեռու պահեք կուռքերից»: Այս պատվերից կարելի է հասկանալ, որ առաքյալը հորդորում է մեզ հեռու մնալ կեղծ ուսմունքներից: Դա կարող ենք անել, երբ լցվում ենք Սուրբ Հոգով և արդարության պտուղներով (Եփես. 5:18, Փիլ. 1:11):

### 3. Բ Հովհաննես (մ.թ. 90)

Հովհաննեսի 2-րդ նամակն ամենակարճ նամակն է անգլերեն Աստվածաշնչում (Հովհաննեսի 3-րդ նամակն ամենակարճ նամակն է

բնագիր հունարենում): Այնուամենայնիվ, այն իր մեջ պարունակում է բազմաթիվ հրահանգներ, որոնց լավ կլինի ուշադրություն դարձնել:

Ինչպես նշվեց ներածության մեջ, այն անձնական նամակ էր՝ հասցեագրված ընտրյալ (կամ հայտնի, տարբերվող) տիկնոջ և նրա որդիներին: Թվում է, թե այս տիկինն այրի էր, որն իր կյանքը նվիրել էր Աստծուն ծառայելուն, և հայտնի էր շրջիկ ուսուցիչների ու Աստծո Խոսքի քարոզիչների հյուրընկալությամբ: Այդ օրերին կային սուրբ-գրությունների շատ քիչ օրինակներ, և եկեղեցիները մեծապես կախում ունեին այցելող ուսուցիչներից: Հավանաբար նամակը գրվելու ժամանակ Հովհաննեսը միակ առաքյալն էր, ով դեռևս ողջ էր մնացել, սակայն կային նաև լավ պատրաստված հետևորդներ, ինչպիսիք էին՝ Տիտոսը, Տիմոթեոսը, Շիդան, Ապողոսը, Գալոսը, Արիստարքոսը, Ստեփանոսը, Փորտոնատոսը, Աքայիկոսը, Տյուքիկոսը, Արտեմասը, Եպափրոդիտոսը, Եպափրասը, Արքիպոսը, Դեմետրիոսը և այլք: Այս մարդիկ շարունակեցին առաքյալների սկսած գործը: Մեծ թվով կեղծ ուսուցիչներ էլ կային, և Հովհաննեսն այս նամակում նախազգուշացնում էր նրանց մասին:

### 3.1 Քրիստոնյայի քայլվածքը (1-6)

Հովհաննեսն ուրախանում էր՝ իմանալով, որ տիկնոջ որդիներից ումանք ճշմարտությամբ էին քայլում, ինչպես Հայրն էր պատվիրել: Այնուհետև նա ասում է, որ մենք պետք է սիրենք միմյանց, քայլենք՝ հնազանդվելով Աստծո պատվիրաններից, որոնց մեջ մտնում է սիրո մեջ քայլելը (Բ Հովհ. 4-6):

### 3.2 Քրիստոնյայի վտանգը (7-13)

Սուտ ուսուցիչները նրանք էին, ովքեր չէին ընդունում, թե Հիսուս Քրիստոսը մարմնով է եկել: Հովհաննեսը նրանց անվանում է խաբեբաներ և հակաքրիստոսներ: Նրանք, ինչպես և ճշմարիտ ուսուցիչները, ճանապարհորդելիս ուտելիք և կացարան էին փնտրում մարդկանց մոտ, բայց այս տիկինն ինչպիսի՞ վերաբերմունք պետք է ցուցաբերեր նրանց նկատմամբ: Արդյո՞ք նա պետք է ընդուներ նրանց և հյուրընկալություն ցուցաբերեր:

Հիսուսի աստվածության և մարդեղության վերաբերյալ սխալ ու-

սուցումներ տարածող այս խաբեբաները լրջորեն մեղանշել էին. նրանք դուրս էին եկել ճշմարտության սահմաններից: Հովհաննեսն ասում է, որ նրանք չափն անցել էին և Քրիստոսի ուսմունքում չէին մնում (Բ Հովհ. 9): Նրանք չէին կարող ճշմարիտ քրիստոնյաներ լինել: Եթե տիկինը և նրան ընկերակցող հավատացյալները նրանց բարություն ցուցաբերեին, ապա վտանգի տակ կդնեին այն ճշմարտությունը, որը ինքը և իր հետ եղողները մեծ ջանքով պահում ու որին հնազանդվում էին: Այդպես անելով՝ ինքը և իր ընկերները կարող էին կորցնել իրենց վարձատրության մի մասը Քրիստոսի ատյանի ժամանակ:

Հետևաբար, երբ այդ մարդիկ իր դուռը թակեին ու ներկայանային որպես ուսուցիչներ, նա պետք է ստուգեր, թե նրանք ինչպիսի վարդապետություն ունեին Քրիստոսի Անձի վերաբերյալ, և, եթե նրանք ճշմարտության կողմնակից չէին, ապա չպետք է ներս ընդուներ: Նրանց ներս ընդունողը հաղորդակից էր դառնում նրանց չար գործերին (Բ Հովհ. 10-11):

Հովհաննեսն այս տիկնոջը շատ բան ուներ ասելու, բայց գրիչ ու թանաք օգտագործելու փոխարեն նա մախրնտրեց այցելել նրան և դեմ առ դեմ խոսել նրա հետ, որպեսզի նրանց ուրախությունը կատարյալ լիներ: Նամակն ավարտվում է ընտրյալ քրոջ որդիների բարևներով, որը հավանաբար նույնպես այրի կին էր:

#### **4. Գ Հովհաննես (մ.թ. 90)**

Այս կարճ նամակը նույնպես հասցեագրված է անհատի՝ Հովհաննեսի սիրելի ընկեր Գայոսին, ում ճշմարտապես սիրում էր (Գ Հովհ. 1): Հավանական է, որ սա նույն Գայոսն է, որը մկրտվեց Պողոս առաքյալի կողմից և հոգ տարավ առաքյալի մասին (Ա Կորնթ. 1:14, Հռոմ. 16:23): Կա նաև Գայոս անունով ուրիշ մարդ, ում մասին նշված է Գործք 19:29 և 20:4-ում:

##### **4.1 Հանձնարարություններ Գայոսին (1-8)**

Հովհաննեսն ուրախացավ, երբ տեղեկացվեց, որ Գայոսը հավատարիմ էր ճշմարտությանը և շարունակում էր քայլել ճշմարտության մեջ: Գայոսը նաև հավատարիմ էր եղբայրների մասին հոգ տանելու

մեջ, որոնք շրջում էին՝ եկեղեցիներն ամրացնելու համար, ովքեր միայն քրիստոնյաներից էին ընդունում իրենց նյութական աջակցությունը: Այս լավ եղբայրներին պետք է օգնեին Աստծուն արժանի կերպով, որպեսզի բոլորը միասին աշխատեին ճշմարտության համար (Գ Հովհ. 5-8):

Հյուրընկալությունը գովված է առաքյալի կողմից: Նա գրում է. «Եթե աստվածահաճո կերպով նրանց ճանապարհես, լավ կանես... Ուստի մենք պարտավոր ենք այդպիսիներին ընդունել, որպեսզի ճշմարտության գործակիցներ լինենք» (Գ Հովհ. 6-8): Իսկապես, մենք տեսնում ենք, որ Աստված պատվում է հյուրասիրություն ցուցաբերողներին: Տեր Հիսուսն ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ Իմ այս եղբայրներից ամենափոքրին արեցիք՝ Ինձ արեցիք» (Մատթ. 25:40, համեմատե՛ք 25:45):

## 4.2 Գիտորեփեսի դատապարտումը (9-11)

Ակնհայտ է, որ Հովհաննեսը գրել էր այն եկեղեցուն, որի անդամ էր Գայոսը, բայց երբ նրա մամակը մերժվեց Գիտորեփես անունով մի մարդու կողմից, Հովհաննեսը գրեց Գայոսին: Պողոսը նախազգուշացրեց Գիտորեփեսի մման մարդկանց մասին, երբ նա հրաժեշտ տվեց Եփեսոսի երեցներին (Գործք 20:29-30): Գիտորեփեսը նրանցից մեկն էր. հպարտությամբ ու փառասիրությամբ լի՝ նա ուզում էր առաջին տեղը զբաղեցնել: Նա մերժեց Հովհաննեսին և Հովհաննեսի կողմից ուղարկվածներին և այդպես անելով՝ մերժեց ճշմարտությունը: Հովհաննեսը մեղադրում է նրան՝ չարախոսության և այցելող եղբայրներին ողջունել ուզող եղբայրներին եկեղեցուց դուրս հանելու համար: Գիտորեփեսը ճշմարիտ քրիստոնյա չէր. նա չար էր, ուստի Աստծուց չէր և Աստծուն չէր տեսել (Հովհ. 9-11):

Ինչպե՞ս պետք է վարվեին մման լուրջ խնդրի հետ: Հովհաննեսի խրատն այն էր, որ եղբայրները պետք է շարունակեին բարիք գործել, և Հովհաննեսն անձամբ կգար և հրապարակավ կդատապարտեր այդ մարդուն՝ չարամիտ բամբասանքի համար (Գ Հովհ. 10-11):

(Շարունակելի)

## Պահել Օրենքը

### Մատթեոս 5:17-20

**Օ**րենքը պահող մարդը քանի՞ անգամ պետք է խախտի այն, որ օրինազանց համարվի: Պատասխանը շատ պարզ է՝ ընդամենը մեկ անգամ: Օրենքի յուրաքանչյուր խախտում իր հետևանքն ունի:

Ոստիկանը քեզ կանգնեցնում է երթևեկության կանոնները խախտելու համար, իսկ դու նրան ասում ես, որ առաջին անգամ ես խախտում անում, փորձում ես բացատրել, որ միշտ օրենքը պահող մարդ ես եղել, բայց նա կարծես չի էլ լսում քեզ կամ անտեսում է ասածդ և տուգանում: Անշուշտ, երթևեկության կանոնները խախտելն այնքան լուրջ է, որքան Աստծո օրենքը խախտելը: Աստծո օրենքը խախտելու կամ նրա փառքից պակասելու պատիժը մահն է:

«Որովհետև մեղքի վարձքը մահն է, բայց Աստծո շնորհը՝ հավիտենական կյանքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Հռոմ. 6:23):

Մա վերաբերում է թե՛ «մեծ» (օրինակ՝ սպանությունը), թե՛ «փոքր» (օրինակ՝ բամբասանքը) մեղքերին:

«Ով որ բոլոր օրենքը պահի և մեկում մեղանչի, ամեն օրենքին եղավ պարտական» (Հակ. 2:10):

Պատժից խուսափել հնարավոր է միայն մեկ եղանակով՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Նա վճարեց իրեն դարձող բոլոր հանցավորներին փրկագները համար:

Ինչպե՞ս է դա արվում: Նախևառաջ՝ դու պետք է գիտակցես, որ մեղավոր ես Աստծո օրենքը խախտելու պատճառով և, անկախ քո ջանքերից, չես կարող խաղաղություն ու ներում գտնել: Երկրորդ քայլն Աստծո առջև խոնարհվելն է և նրանից բոլոր մեղքերի համար ներում խնդրելը: Արա՛ այս ամենը՝ հավատալով, որ Նա կների քեզ:

«Ով որ Որդուն ունի, նա կյանքն ունի, և ով որ Որդուն չունի՝ կյանքը չունի: Այս բաները գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավա-

տացյալներինդ, որ գիտենաք, թե հավիտենական կյանք ունեք» (Ա Հովհ. 5:12-13):

Եթե ուզում ես հավիտենական կյանքի վստահություն ունենալ, կարող ես այս կարճ աղոթքն անել.

«Սիրելի՛ Հիսուս, Ես օգնության կարիք ունեմ, խնդրում եմ օգնի՛ր, ես մեղավոր եմ, բայց ուզում եմ կյանքս կարգավորել, սակայն մենակ չեմ կարողանում: Շատ եմ փորձել ու ձախողվել: Խնդրում եմ ների՛ր իմ բոլոր մեղքերը և ինձ նո՛ր սկիզբ տուր: Ես հավատում եմ, որ դու խաչվել ես իմ մեղքերի համար և սիրում ես ինձ: Արի՛ իմ կյանքում և իմ Տե՛րն ու Փրկի՛չը դարձիր: Ես քո խաղաղության և ուժի կարիքն ունեմ: Ես իմ կյանքն ամբողջությամբ հանձնում եմ քեզ: Այժմ հավատում եմ, որ ներել ես մեղքերս ու փրկել հոգիս: Շնորհակալություն: Ամեն՛ն»:

Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան  
Քաղված «Աստծո արիեստանցը» գրքից



## Առակաց 3:1-7

Որդի՛ս, մի՛ մոռանա իմ օրենքը, այլ քո սիրտը թող իմ պատվիրանները պահի. քանի որ քեզ երկար օրեր ու կենդանության տարիներ և խաղաղություն են ավելացնելու: Ողորմությունն ու ճշմարտությունը թող քեզ չթողնեն. դրանք կապի՛ր քո պարանոցի վրա, քո սրտի տախտակի վրա գրի՛ր դրանք: Այդպես դու Աստծո և մարդկանց առջև շնորհք և բարի համարում կգտնես: Քո ամբողջ սրտով ՏԻՐՈՋԸ վստահիր ու մի՛ հենվիր քո հասկացողության վրա: Քո բոլոր ճամփաների մեջ ճանաչի՛ր Նրան, և Նա կուղղի քո շավիղները: Դու քո աչքին իմաստուն մի՛ լինիր, վախեցի՛ր ՏԻՐՈՋԻՑ ու հե՛տ քաշվիր չարությունից:

## Եղիա մարգարեն

Գ Թագ. 17:18-19

**Ե**ղիա մարգարեն «կրակի մարգարե» է կոչվել: Նրա կյանքը տարբեր պատկերներով ներկայացված է մեզ: Այդ պատկերներում տեսնում ենք նրան՝ որպես Աստծո կենդանի վկայի:

Եղիայի կյանքի ամենակարևոր և հատկանշական դեպքը տեղի ունեցավ, երբ նա Աքաաբ թագավորի առաջ կանգնեց՝ ասելու, որ Աստված Իսրայելի երկրին անձրև չի ուղարկելու: Երեքուկես տարի անձրև չտեղալուց հետո Աքաաբ թագավորը մարդ ուղարկեց ամեն կողմ, որ Եղիային բռնեն ու բերեն իր մոտ, որպեսզի նրան սպանել տա: Եղիան գնաց: Դեռ չհասած՝ դաշտում Աքաաբի ծառային՝ Աբդիա-յին հանդիպեց, ով հավատացյալ անձ էր: Եղիան նրան ասաց՝ գնա թագավորին լուր տա, որ ինքը գալիս է՝ Աքաաբին տեսնելու: Աբդիան վախեցավ, որ եթե գնա թագավորին կանչելու, մինչև թագավորը գա, Աստծո Հոգին կարող է իրեն ուրիշ տեղ փոխադրել: Թագավորն էլ խորհելով, թե իրեն խաբել է, նրան սպանել կտա: Եղիան աստվածային քաջությամբ ասաց, որ թագավորին դեմ առ դեմ պիտի տեսնի: Երբ Աքաաբը եկավ, ասաց. «Դ-ո՞ւ ես Իսրայելին տառապեցնողը»: Եղիան քաջությամբ պատասխանեց. «Իսրայելը տառապեցնողը ես չեմ, հապա դու ես ու քո հոր տունը, որ Աստծո պատվիրանները թողեցիք: Հավաքի՛ր Բահադի կուռքերի քահանաներին Կարմեղոս լեռան վրա և ում Աստվածը կրակով պատասխանի, նրա հետևից կգնանք»:

Երբ Աքաաբը թագավոր եղավ, նրա ամենամեծ սխալը Հեզաբելի՝ Կյուրոսի թագավորի աղջկա հետ ամուսնանալն էր, և այն ժամանակ Կյուրոսում պաշտելի չաստվածը Մելգարդն էր՝ բնության օրհնություններ և անեծքներ ուղարկող չաստվածը: Որպեսզի իր հեթանոս կնոջը հաճելի լինի, Աքաաբն այդ երկրի չաստվածներին բերեց իր երկիր և ժամանակի ընթացքում Եհովա Աստծուն պաշտելու փոխարեն մարդիկ կամաց-կամաց սկսեցին պաշտել Մելգարդին: Աստված այս պատճառով անձրևը դադարեցրեց: Աստված կարող էր ուրիշ պատիժ

տալ, բայց քանի որ պաշտում էին աճրևի չաստծուն, Աստված ուզեց ցույց տալ, որ Ինքն է անձրև ուղարկողը, ոչ թե Մելքարդը՝ բնության չաստվածը:

Այստեղ խոսք ունեն հավատացյալ երիտասարդ-երիտասարդուհիների համար, որոնք ընտանիք են կազմում: Որքան զգույշ պետք է լինեն Աստծո եկեղեցուց դուրս գտնվող անձերի հետ ընտանիք կազմելու հարցում: Նրանք իրենց վրա Աստծո անեծքն են բերում, աղետ են բերում: Նրանք պատրաստվում են Աստծո պատիժներին ենթարկվելու, քանի որ Աստծո կամքը դա չէ: Աստծո Խոսքն ասում է, թե լույսն ի՞նչ կապ ունի խավարի հետ:

Աքաաբը նույնը արեց՝ ամուսնանալով հեթանոս կնոջ հետ: Դրա պատճառով նա մի ամբողջ ազգ կռապաշտության առաջնորդեց:

Կարմեղոս լեռան վրա, ինչպես գիտեք, 450 մարգարե մինչև կեսօր Բահադի անունը կանչեցին ու պատասխան տվող չեղավ, իսկ Եղիան Տիրոջ փվված սեղանը նորոգեց, փայտերի ու ողջակեզների վրա ջուր լցնել տվեց ու ծունկի գալով՝ աղոթեց Աստծուն. «Ո՛վ Տեր, ցույց տուր այս մարդկանց, որ Դ-ու ես Աստված»: Կրակն իջավ, լափեց զոհն ու ջուրը, և ժողովուրդն աղաղակեց. «Տեր Եհովան է Աստված»: Եղիան բռնել ու սպանել տվեց հեթանոս կռապաշտ մարգարեներին: Իսրայելի երկրում արթնություն եղավ, ու բոլորը Աստծուն դարձան: Երբ Հեզաբել լսեց այս բոլորը, Եղիային լուր ուղարկեց. «Եթե մինչև վաղը այս ժամանակ քո գլուխը քո մարմնից չբաժանեմ, ես Հեզաբել թող չլինեմ»: Այս լուրը ի՞նչ կանի Եղիային: Նա գնաց մի ծառի տակ նըստեց ու ասաց. «Ո՛վ Տեր, այլևս հերիք է, վերցրո՛ւ իմ հոգին»:

Արդյոք այս փորձառությունը միայն Եղիայի՞ փորձառությունն էր, թե՞ մեզ նույնպես պատահում է: Կյանքի պարագաները մեզ էլ են հուսահատեցնում: Էական չէ, թե ինչպիսի հաջողության մեջ ենք, ինչ մեծ ուրախության մեջ ենք, սատանան ինչ-որ տեղից հարվածում է: Այդ պահին տեսնում ես, որ ինչի վրա հույսդ դրել էիր, կորցրիր: Երբեմն՝ հավատացյալները որոշում են ավելի նվիրված կյանք ապրել Աստծո համար: Մի քանի օր չանցած՝ չակնկալած տեղից հարց է ծագում, նեղություն, դժվարություն է առաջանում, և ահա այդ ուրախությունը տխրության է վերածվում, երբեմն էլ՝ հուսահատության: Սրա հեղինա-

կը սատանան է: Նա չի ուզում, որ դու քո հաղթության մեջ շարունակես կյանքդ: Եղիան, պարտված զգալով, ասում է. «Ո՛վ Տեր, առ իմ հոգին, մեռնեմ»: Ծառի տակ է նստում և քնում, սակայն հրեշտակը երկու անգամ արթնացնում է նրան, որ վեր կենա և ուտի, որովհետև ճամփա ունի գնալու: Գ Թագ. 19:8-րդ համարն ասում է, որ Եղիան վեր կացավ, կերավ պատրաստված կերակուրը, խմեց ջուրը և այդ կերակուրի ուժով քառասուն օր, քառասուն գիշեր գնաց ու մինչև Քորեթ՝ Աստծո լեռը հասավ: Եղիան ո՞ր գնաց՝ Աստծո լեռը: Ո՞վ տարավ նրան. Աստված տարավ: Ինչո՞ւ. Իր հետ հանդիպելու, այս հաղթական մարզաբեի պարտությունը հաղթության վերածելու: Եվ Քորեթ լեռան վրա Եղիան Աստծո հետ նոր հանդիպում ունեցավ, Նրան տեսավ, Նրա ձայնը լսեց, Նրա հետ խոսեց: Աստված նրան նոր պատվերներ տվեց, և այդ նոր ուժով Եղիան իր կյանքը շարունակեց: Նա Եղիսեփն իր տեղը դրեց, նոր թագավորներ օժեց և իր կյանքը շարունակեց մինչև այն օրը, երբ հրեղեն կառքով Աստված նրան երկինք փոխադրեց:

Որպես Աստծո զավակ՝ հաջողությունից հետո պարտությանը, ձախողությանը, տխրությանը, հուսահատությանը մեջ ո՞ւմ ես դիմում, ո՞ր ես գնում: Դարմանն Աստծո լեռն է: Ինչպես Աստված Եղիային Քորեթ լեռը տարավ, քեզ Գողգոթա է կանչում՝ խաչյալ Հիսուս Քրիստոսին հանդիպելու: Ամեն տեսակ նեղություններում Տիրոջը նայիր: Նա գիտի մեր վիճակը, գիտի, թե որտե՞ղ ենք և որտե՞ղ պետք է լինենք: Նա մեր եղած տեղում կհասնի մեզ, կգա մեզ մոտ, տիղմից կհանի մեզ ու մեր ոտքերը ժայռի վրա կհաստատի, մեզ երգելու երգ կտա, որն աշխարհը չի կարող վերցնել մեզանից: Ահավասիկ Եղիայից քաղած իմ դասը ցույց է տալիս, որ հնարավոր է հաղթությունից, հաջողությունից, ուրախությունից, բարձունքները բարձրանալուց հետո ընկնել, հուսահատվել, հուսախաբվել մարդկանցից, եկեղեցուց, պատվելիից, ամուսնուց, կնոջից, ծնողներից: Այս բոլորը կարող են պատահել, սակայն ո՞ւմ մոտ գնանք: Աստծո լեռը գնանք, Գողգոթա գնանք, այնտեղ Քրիստոսը կա, Հիսուսը կա, ով այդ բոլորը հաղթության է փոխում: Ամեն:

Վեր. Հապիպ Ալաճաճի  
Քաղված՝ «Հատրնտիր հոգևոր պատգամներ» գրքից

## **Ինչո՞ւ տեսիլք**

### **Ամբակում 2:2-4**

#### **Տիրոջ պատասխանը եկավ տեսիլքով:**

Ամբակումը Տիրոջն սպասեց, մինչև պատասխան ստացավ իրեն մտատանջող հարցերի (Ամբ. 2:1): Տիրոջ պատասխանը եկավ Ամբ. 2:2-3 արձանագրված տեսիլքում, ինչը պատմության ճշմարտացի հեռանկար և դրա հետևանքի աստվածային պատասխան է տալիս: Այս պատասխանը լուծում չի տալիս բոլոր ցավատանջ հարցերին, սակայն Աստծո ժողովրդին ուխտի կյանքի ուղու հրահանգ է տալիս այստեղ և հիմա (Ամբ. 2:3, 4): Իրական կյանքում Աստծո ճանապարհները մարմին են առնում հավատարիմների համար, կսկիծն ու մահը՝ գոռոզների ու ամբարտավանների համար (Ամբ. 2:4): Տիրոջ ներկայությունն Իր տաճարում հաստատում է պատմության վրա Իր Տեր լինելը և հավաստիացնում, որ ի վերջո Իր ճշմարտացի պահանջը բովանդակ աշխարհին համընդհանուր ճանաչում կստանա (Ամբ. 2:14,20, Եսայի 45:21-25, Ա Կորնթ. 15:24-28): Չարը բռնում է դեպի մահ տանող արահետը: Արդարը հավատքով բռնում է մի ուղի, որ դեպի կյանք է տանում: Այս տարբերագատումը սփոփանք է Ամբակումի և Աստծո բոլոր զավակների համար:

#### **Արդարը**

Ի տարբերություն ամբարտավանի՝ արդարը հիրավի կպաշտպանվի Աստծո կողմից իր հավատքով: Սա է Աստծո պատգամի կորիզը Ամբակումի գրքին և դրա միջոցով:

#### **Հավատքով**

Այս համատեքստում եբրայերեն բառը նշում է անսասան վստահություն Տիրոջը, վստահություն, որ տոկում է: Անօրինություններով լի (Ամբ. 1:2-4) ու Աստծո ցասմանը ենթակա երկրում Տերը խոստանում է, որ Հուդայում արդար մնացողը կապավինի Աստծուն, ով Իր բարկության մեջ ողորմություն է հիշում (Ամբ. 3:2): Եբրայեցիներին ուղղ-

ված Թուղթը հիշեցնում է Ծննդ. 15:6-ի խոսքերը և վերագրում Ամբակունի իրավիճակին: Աբրահամը հավատքով սպասեց Աստծո խոստմունքի կատարմանը (Եբր. 6:15), իսկ այժմ երկայնամտորեն պետք է սպասեն նաև Ամբակունն ու մնացածները (Ամբ. 3:16):

### **Հավատքը՝ որպես կենսաձև**

Հավատքը միանգամյա գործողություն չէ, այլ կենսակերպ: Ճշմարիտ հավատացյալը, Աստծուց արդարացված, հաստատ կմնա հավատքում որպես իր կենսաձևի (Կող. 1:22-23, Եբր. 3:12-14): Մեր ժամանակներում միայն հավատքի հեռանկարն ու հնազանդ վստահությունն է առ Աստված, որ իմաստ են հաղորդում գոյությանն աշխարհում՝ Աստծո խոստմունքի արդեն նախնական կատարման և դեռևս ոչ վերջնական իրագործման միջև:

### **Ավետարանի հռչակումը**

Պողոս առաքյալը Ամբ. 2:4-ն օգտագործում է որպես հիմնական տեքստ Ավետարանը հռչակելու համար (Հռոմ. 1:17, Գաղ. 3:11, Եբր. 10:35-39): Ամբակունի պես (1) առաքյալը գիտեր, որ մեղքն անհամատեղելի է Աստծո սրբության հետ, և որ այս հակադրությունների ճակատագրական լարումը կարող է հանգուցալուծվել միայն աստվածային միջամտությամբ: Մարգարեական խոսքն Ամբակունին (Ամբ. 2) սկզբունքորեն հայտնում է, թե Աստված ինչպես է վարվելու մեղքի ու սրբության անհամատեղելիության հետ:

### **Հիսուս Քրիստոսի Խաչը**

Հիսուս Քրիստոսի Խաչը և վերջին դատաստանն Աստծո հայտնության կատարումներն են: Ամբակունի պես Պողոս առաքյալը հաստատում է, որ ճշմարիտ կյանք հնարավոր է միայն Տիրոջը լիակատար ապավինելով: Նման կախվածությունը, խարսխված մեր Աստծո հավատարմության վրա, փոխակերպում է այս աշխարհում մեր գոյությունը՝ մեր կյանքը լցնելով ուրախությամբ, Իր խոստմունքին Աստծո հավատարմության հավաստիությամբ (Ամբ. 2:3, 3:17-19):

Գոկտ. Չեսլով Բասսարա  
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)

## Կորեացի Պողոսը

Հյուսիսային Կորեայում մի անհավատ մոլեռանդ երիտասարդ Պողոսի նման տասը տարի հալածեց քրիստոնյաներին: Նա իր շրջանի լավագույն գաղտնի ոստիկանն էր: Ճարպկությամբ կարողացավ տասը քրիստոնյաներից բաղկացած խմբում մտնել՝ ձևացնելով, թե նրանցից մեկն է: Հետո թափանցեց հավատացյալների ավելի մեծ խումբ՝ նրանց մատնելով ոստիկանությանը: Հարյուրից ավելի քրիստոնյա մարդիկ շատ մեծ գին վճարեցին իրենց հավատքի համար:

Կորեացի այս գաղտնի գործակալը հիշում է. «Երբ չարչարում էին այս հավատացյալներին, նրանք երբեք չէին դիմադրում, չէին պատասխանում, ոչ էլ գոռում էին ու հայիռում: Նրանք լուռ կանգնում էին, մինչ արտառոց տանջանքների էին ենթարկվում և տառապալից ձայնով միայն «Ճուժու» էին ասում, որ իրենց լեզվով «Տեր» է նշանակում:

Ինչ չարչարանքի էլ ենթարկվեին, չէին վհատվում և չէին ընկրկում: Նույնիսկ մահվան պարագայում իրենց Տիրոջը չէին ուրանում»:

Կորեացի այս հավատացյալների կեցվածքը պարզ վկայություն էր, որ այս գաղտնի գործակալի վրա մեծ ազդեցություն թողեց: Տեղացիները սկսեցին կասկածել նրա վրա և բանտարկեցին նրան՝ որպես քրիստոնյա, չարչարեցին ու ծեծեցին: Չդիմանալով չարչարանքներին՝ նա մատնեց լրտեսության ցանցի օրենքը և խոստովանեց, որ գաղտնի գործակալ է, ոչ թե քրիստոնյա: Թեև նրան ազատ արձակեցին, սակայն հրահանգեցին, որ կենտրոն գնա՝ հաշվետվություն ներկայացնելու: Եթե նրա՝ լրտեսության գաղտնիքը բացահայտելը ի հայտ գար, անպայման սպանվելու էր, ուստի որոշեց Չինաստան փախչել: Դա անելու համար պետք է անցներ մի սառած գետով. այն մոլեռանդ կորեացու համար եղավ նրա «Դամասկոսի ճամփան»:

«Սառած ջրի պատճառած ցավն ինձ հիշեցրեց այն հաստատամիտ քրիստոնյաներին, որոնց մահվան պատճառ էի դարձել, - տըրտմալից ասում է նա: - Ուստի կանչեցի. «Հանանի՛մ (Աստված), ների՛ր

ինձ և պաշտպանի՛ր»։ Հանկարծ զգացի, որ մի ուրիշ աշխարհ մտա։ գերբնական խաղաղություն պատեց ինձ, և հանգստացա»»։

Չինացի պահակների հրացանաձգությունից խուսափելու համար, նա մթում սարդեց և որոշեց ամենամոտ տունը գնալ։ Ի վերջո Աստծո նախախնամությամբ ապաստանեց կորեական-չինական մի եկեղեցում։ «Գեղեցիկ լուսափայլ դեմքերով մարդիկ ընդունեցին ինձ, հագցրին, կերակրեցին և Հիսուսի մասին պատմեցին», - ասում է նա։

Մի քանի օր հետո նա իր ամոթալի անցյալը խոստովանեց այդ եկեղեցու հովվին, որը ցույց տվեց նրան, թե ինչպես կարող է Աստծո ներքումը ստանալ Աստծո Խոսքի համաձայն, և հավատարմություն ուխտել Տեր Հիսուս Քրիստոսի հետ։

Այսօր այս կորեացի երիտասարդը Պողոսի նման Աստծո սերը բաժնեկցում է ամենուրեք։ «Ես շատ անպիտան եմ», - ասում է նա խոնարհությամբ։

Քրիստոնեական մի վառ վկայություն է այն մասին, որ մահը կարող է քաջաբար, շատ ազդեցիկ դիմագրավել, Աստծո սերը ցուցաբերել նորահավատին, ինչը շատ կարևոր է։ Թող Տերն օգնի մեզ, որ քաջ վկաներ լինենք Նրա համար և ձեռնառու՝ նորահավատին, ընկածին կամ լքվածին։

«Մի՛ վախենա այն ամենից, ինչ պիտի կրես։ Մինչև մահ հավատարի՛ն եղիր, և քեզ կտամ կենաց պսակը» (Հայտ. 2:10)։

Քաղված՝ «Օրհնաբեր նոնենին» գրքից

## **Կեղծ եղբայրներ**

### **Գաղատացիներին 2:1-10**

**Պ**ողոս առաքյալն այս հատվածում շարունակում է 1-ին գլխում սկսած իր նյութը։ Նա մեկ անգամ ևս մատնանշում է, թե իր հեղինակությունն Աստծուց է, Ավետարանի իր ուսուցումները Տիրո-

ջից է վերցրել, և դրանք համահունչ են մյուս առաքյալների ուսմունքներիին:

(Հմբ 1-2) Պողոսը Բառնաբասի և Տիտոսի հետ Երուսաղեմ գնաց՝ առաքյալներին տեսնելու համար: Պողոսը մեծ ջանքով աշխատում էր եկեղեցիներ հիմնելու, նոր քրիստոնյաներին ուսուցանելու, տեղական եկեղեցիներում առաջնորդներ բարձրացնելու համար և չէր ուզում, որ իր կատարած հսկայական աշխատանքը որևէ կերպով վնասվեր, կործանվեր կամ խոչընդոտվեր որոշ մարդկանց կողմից:

(Հմբ 3) Թվում է, թե Պողոսը Տիտոսին իր հետ վերցրեց որպես վկա ոչ թե իր համար, այլ նրանց համար, ովքեր հակառակվում էին իրեն և քրիստոնյաներին, հատկապես նորադարձ հավատացյալներին կեղծ ավետարան (օրինապաշտություն) էին քարոզում: Տիտոսը հեթանոս էր, որը քրիստոնեությունը վերջերս էր ընդունել: Նա թլփատված չէր: Պողոսը Տիտոսին իր հետ տարավ, որպեսզի ապացուցի, որ թլփատությունն անհրաժեշտ չէ փրկության համար, քանի որ փրկությունը Օրենքը պահելով չէ, այլ շնորհքով է: Այն գործով չէ, որ մարդ կարող է անել, այլ Քրիստոսի՝ խաչի վրա կատարած գործի միջոցով է: Հետևաբար, երբ Պողոսը Տիտոսին իր հետ Երուսաղեմ բերեց, առաքյալներից ոչ ոք չհակառակվեց Պողոսին՝ ասելով, թե Տիտոսը պետք է թլփատվի (հմբ 3): Այն փաստը, որ Երուսաղեմում գտնվող մյուս առաքյալները, հատկապես Պետրոսը, Հովհաննեսը և Հակոբոսը (հմբ 9), չհակառակվեցին Պողոսին, ցույց է տալիս, որ Պողոսի հեղինակությունն Աստծուց էր, և այն Ավետարանը, որ ուսուցանվում էր, Աստծուց էր:

(Հմբ 4) Պողոսն ապացուցեց իր հեղինակությունը և ուսմունքը հատկապես կեղծ եղբայրներին, ովքեր նորադարձ քրիստոնյաներին ուսուցանում էին, թե պետք է Օրենքը պահեն (Գործք 15:1): Հետևաբար, այս կեղծ եղբայրների ուսմունքը կեղծ ավետարան էր: Նրանք ձևացնում էին, թե քրիստոնյաներ են, բայց այդպիսին չէին, քանի որ դեռ Օրենքի ստրուկներ էին: Այնուամենայնիվ, նրանք կարողացան եկեղեցի մտնել, անհամաձայնություն ու հակասություն առաջացնել և խոչընդոտել Աստծո գործի առաջխաղացմանը: Այդպիսի բաները երկար ժամանակ մնացին եկեղեցու պատմության մեջ, երբ սուտ

ուսուցիչներ և առաջնորդներ (կեղծ եղբայրներ), եկեղեցիներ մտնելով, վնասեցին եկեղեցուն իրագործված լավ աշխատանքին (Բ Պետ. 2:1): Ցավոք, սա միայն 2000 տարի առաջ գոյություն ունեցող եկեղեցու խնդիրը չէ, այլ այսօր դեռևս որոշ եկեղեցիներ նման խնդիրների են բախվում:

Կան մարդիկ, որոնք դեռևս շեշտում են փրկվելու համար գործեր անելու անհրաժեշտությունը: Նրանք չեն ասում՝ միայն գործեր, այլ Հիսուս և գործեր, Հիսուս և Օրենք, Հիսուս և ծեսեր, Հիսուս և ավանդույթներ, Հիսուս և այլն: Սակայն Պողոսն այստեղ փաստում է, որ փրկության համար անձը Տեր Հիսուս Քրիստոսին հավատալու կարիք ունի, ոչ թե որևէ ուրիշ բանի. հավատալ Հիսուսի մասին Աստվածաշնչի ասածին, Նրան վստահել և փրկության համար միայն Նրան ապավինել: Ցավալի է, որ այսօր կան ոմանք, ովքեր սխալ ավետարան են սովորեցնում: Երբ որևէ մեկը ձեզ սովորեցնի, թե փրկվելու համար պետք է դադարեցնեք ծխելը, իմացե՛ք, որ նա սովորեցնում է կեղծ ավետարան, քանի որ գործ է ենթադրում: Երբ որևէ մեկը սովորեցնի ձեզ, թե փրկվելու համար հարկավոր է հրաժարվել ոգելից խմիչք օգտագործելուց, իմացե՛ք, որ նա սովորեցնում է կեղծ ավետարան (պարկեշտ հագնվել, կանանց գլխի մազերը ծածկել, մկրտվել, այս կամ այն բանն անել...): Խնդրում եմ ինձ սխալ չհասկանաք: Ես այստեղ չեմ խոսում քրիստոնեական կյանքն ապրելու մասին, այլ փրկություն ստանալու մասին: Փրկվելու համար անձը միայն Հիսուսի կարիքն ունի և ուրիշ ոչնչի: Անձը պետք է հավատա Հիսուսի ով լինելուն (Աստվածաշունչն ինչ է ասում Հիսուսի մասին) և իր փրկության համար լիովին վստահի ու ապավինի Նրան (Հովհ. 3:16, Ա Հովհ. 5:11-12, Հովհ. 3:36, Գործք 16:31): Իհարկե, սա մտավոր գիտելիք չէ Հիսուսի ով լինելու կամ Նրա գոյությանը հավատալու մասին: Սա Նրան լիովին վստահել է փրկության համար:

Հետևաբար, մենք պետք է իմանանք, որ Քրիստոսի միջոցով ազատված ենք ամեն տեսակի Օրենքի գործերից, մարդկային ավանդույթներից, կեղծ համոզմունքներից և մարդկային կարծիքներից: Նույնիսկ փրկությունից հետո գտնվում են մարդիկ, ովքեր օրինապաշտությունն են ջատագովում, ինչպես տեսանք զաղատացիների եկեղեցուն: Հետևաբար, պետք է զգույշ լինենք, որ Քրիստոսով ազա-

տություն ունենալուց հետո դարձյալ չմտնենք ստրկության տակ, ինչն այս կեղծ եղբայրների արածն էր (հմր 4բ), Գաղ. 5:1, Բ Կորնթ. 3:17, Հովհ. 8:36):

Սակայն սա չի նշանակում, թե որպես քրիստոնյաներ՝ ազատ ենք՝ անելու այն, ինչ ուզում ենք: Բացարձակապես ո՛չ: Այո՛, մենք շնորհքով փրկվեցինք և ազատ ենք Քրիստոսում: Մենք ազատ ենք կեղծ ուսմունքներից, մարդկային գործերից, օրինապաշտությունից, մարդկանց կարծիքներից և այլնից: Սա չի նշանակում, որ որպես քրիստոնյա՝ ազատ ենք՝ անելու այն, ինչ ուզում ենք (Հռոմ. 6:18, Գաղ. 5:13, Ա Պետ. 2:16): Մենք Աստծո դեսպաններն ենք, ներկայացնում ենք Աստծուն և պետք է դրան համապատասխան կյանք ապրենք, կյանք, որն Աստծուն փառք ու պատիվ է բերում:

Եթե նկատեցիք, Պողոսը երկրորդ համարում ասում է, թե հայտնությունով ելավ: Այս հայտնությունն Աստծուց էր, որը Պողոսին խոր համոզմունք և ուժ էր տվել կեղծ ուսմունքներից դիմագրավելու համար (հմր 5): Նա վստահություն ուներ Աստծո Խոսքի վերաբերյալ, որը հայտնված էր իրեն: Ուստի, եթե մենք ուզում ենք այդպիսի վստահություն ունենալ, ապա պետք է ուշադրություն դարձնենք այն նույն հայտնությանը, որը Պողոսն ուներ, այսինքն՝ Ավետարանին, Աստծո Խոսքին: Եվ մինչ ուշադրություն ենք դարձնում Աստծո Խոսքին, մարդեղացած (մարդ դարձած) Հիսուսին, կարողանում ենք ամուր կանգնել և ամեն տեսակի քամիներից չտարուբերվել (Եփես. 4:14):

(Հմր 6-10) Պողոսը կրկին հաստատում է, որ իր հեղինակությունը Տիրոջից է:

Ուստի, հավատո՞ւմ եք Հիսուս Քրիստոսին՝ որպես այնպիսի անձնավորության, ինչպիսին Նա նկարագրված է Աստվածաշնչում: Արդյո՞ք ձեր փրկության համար ձեր վստահությունը միայն Նրա՞ վրա եք դրել: Եթե այդպես անեք, հավատացած կլինեք ճշմարիտ Ավետարանին: Ամեն:

Հովիվ՝ Բաֆֆի Չափարյան